ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 616-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 2-ի 14-Ն որոշման 4-րդ կետը ***Որոշում եմ*** ՝

1 . Բաժին 09 Խումբ 1 Դաս 1 «Նախադպրոցական կրթություն» ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածից 10845.0 հազ. դրամ գումար պակասեցնել, որից 10000.0 հազ դրամ գումարը Բաժին 01 Խումբ 6 Դաս 1 «Ընդհանուր հանրային բնույթի ծառայություններ» ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների շինարարություն» 5112 հոդվածին, 345.0 հազ. դրամ գումարը Բաժին 06 Խումբ 3 Դաս 1 - 58 «Ջրամատակարարում» ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածին, 500.0 հազ դրամ գումարը Բաժին 06 Խումբ 4 Դաս 1 «Փողոցների լուսավորում» ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների շինարարություն» 5112 հոդվածին:
2. Բաժին 05 Խումբ 1 Դաս 1 – 51 Սուբվենցիոն ծրագրի «Աղբահանում և սանիտարական մաքրում» ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների շինարարություն» 5112 հոդվածից 24000.0 հազ. դրամ գումար պակասեցնել, ավելացնելով Բաժին 01 Խումբ 6 Դաս 1 «Ընդհանուր հանրային բնույթի ծառայություններ» ծախսերի նախահաշվի «Շենքերի և շինությունների շինարարություն» 5112 հոդվածին:
3. Բաժին 05 Խումբ 1 Դաս 1 - «Աղբահանում» ծախսերի նախահաշվի «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածից 2900.0 հազ. դրամ գումար պակասեցնել, ավելացնելով Բաժին 05 Խումբ 2 Դաս 1 «Կեղտաջրերի հեռացում» ծախսերի նախահաշվի «Կոմունալ ծառայություններ» 4213 հոդվածին:
4. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. հոկտեմբերի 20
գ.Փարաքար